

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

1979

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻԶ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՑ

ՄԵԾԱԳՈՑՆ ՄՈՆԹՐԷԱԼԻ



**St. Gregory The Illuminator Armenian Holy Apostolic Church
of Greater Montreal**

615 Stuart Ave., Outremont, P.Q. H2V 3H2

ՃԱՆՉՆԱՆՔ ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՈՅ

ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ ԻՐԵՆՑ ՀԱԿԻՐԸ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻԾԵՐՈՎ

- 1.- ԱՌԱՔԵԼԵԱՆ ԱՌԱՔԵԼ.- Ծնած Պէյրութ, 1969-ին հաստատուած Մոնթրէալ: Երկու տարուան շրջան բոլորած ծխական խոր- խուրդոյ մէջ: Այժմ կը զբաղուի ազատ առեւտուրով: Ամուսնացած եւ երկու զաւկի հայր է:
- 2.- ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ.- Ծնած Գահիրէ, 1966-ին հաստատուած Մոն- թրէալ: Եօթը տարիներ -ընդհատուամերով- եղած է ծխական խորհուրդոյ անդամ, ստանձնելով զանձապահի, առեւ- դրարութեան եւ փոխ-ատենապետութեան պաշտօններ: Ներկայիս ան կը վարէ շարք մը այլ ազգային պաշտօններ: Կը պաշտօնավարէ Մոնթրէալ ձէնէրալ հիւանդանոցին մէջ, որպէս «Նիւթլըր մէտրսին», ամուսնացած եւ երեք զաւկի հայր է:
- 3.- ԳՈՒՅՈՒՄԺԵԱՆ ԱՐՏԱ.- Ծնած Աղեքսանդրիա եւ Մոնթրէալ հաստատուած 1962-ին: Ստանձնած է Տէպիլթանթներու պարա- հանդէսներու Տիկնանց Օժանդակի ատենապետութեան պաշտօն: Այժմ ան ատենապետն է ՀԲԸՄ-ի Տիկնանց Յանձնախումբի: Կը պաշտօնավարէ «ԵՆԼ» Ընկերութեան մօտ: Ամուսնացած եւ զաւկի մը մայր է:
- 4.- ԽԱՀԻԿԵԱՆ ՅԱԿՈՒՐ.- Ծնած Պոլիս եւ Մոնթրէալ հաստատուած 1956-ին: Այս տարեշրջանին կը վարէ Եկեղեցւոյ Շաքաթօր- եայ վարժարանի խնամակալութեան ատենապետի պաշտօնը: Ներկայիս ան դասախօսն է Սէն Ժանի Զինուորական համալսարանի անգլիերէն լեզուի եւ գրականութեան ճիւղերուն: Ասկէ զատ Տէքանի պաշտօն կը վարէ «Ֆաբիլիթէ Տէգար է Սիանս տը Ատմինիսթրասիոն-ը» մէջ: Ամուսնացած եւ երեք զաւկի հայր է:
- 5.- ԿԱԶԷՐԵԱՆ ԺԻՐԱՅՐ.- Ծնած Պոլիս եւ Մոնթրէալ հաստատուած է 1965 թուականին: Եղած է Եկեղեցւոյ Երիտասարդաց Կազմակերպութեան վար- չական անդամ: Այժմ վարչական անդամ է Պոլսահայ Միութեան: Կը զբաղուի ազատ առեւտուրով եւ ամուրի է:
- 6.- ՊԱՄՄԱՃԵԱՆ ԱՐԹՕ.- Ծնած Գահիրէ եւ Գանատա հաստատուած 1969-ին: Երկու շրջան եղած է ծխական խորհուրդոյ անդամ, ստանձնելով ատենապետութեան պաշտօն: Ինք սպարէզով դեղագործ է: Ամուսնացած է:
- 7.- ՏԷՄԻՐԺԵԱՆ ԱՐԹՕ.- Ծնած Պոլիս եւ Մոնթրէալ հաստատուած է 1957ին: Շրջան մը եղած է ծխական խորհուրդոյ անդամ եւ ստանձնած ատենապետութեան պաշտօն: Եղած է նաեւ հիմնադիր անդամ- ներէն մին Եկեղեցւոյ Դպրաց Դասին: Ներկայիս ան կը դասախօսէ Մոնթրէալ համալսարանի ատամնաբուժական ժիւղին մէջ. վարելով նաեւ համալսարանի փնտոտուքի ճիւղին նախագահութեան պաշտօնը: Ամուս- նացած եւ երկու զաւկի հայր է:
- 8.- ՓԵԼԹԷՔԵԱՆ ԳԷՈՐԳ.- Ծնած Պոլիս եւ Մոնթրէալ հաստատուած 1968 թուականին: Երեք շրջան եղած է անդամ ծխական խորհուրդոյ, վարելով զանձապահութեան պաշտօն: Եղած է նաեւ Դպրաց Դասու վարչական Եկեղեցւոյ Օժման շրջանին: Արհեստով ոս- կերիչ, ամուսնացած եւ զաւկի մը հայր է:



Ծխական խորհուրդոյս այս տարեշրջանի կազմը.- Չախէն աջ նըստած.- Պրն. Վահէ Բէրէսթէճեան՝ Ատենադպիր, Հոգշ. Տ. Վազգէն Ծ. Վրդ. Բէշիշեան՝ Առաջնորդի Փոխանորդ Գանատայի, Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան՝ Առաջնորդ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի, Հոգշ. Տ. Պարէտ Վրդ. Երէցեան՝ Հոգեւոր Հովիւ եւ նախագահ Գամայնքիս, Պրն. Արթօ Պասմաճեան՝ Ատենապետ

Չախէն աջ ոտքի.- Պրն. Սիսաք Կուտսուզեան՝ Գանձապահ, Պրն. Արա Կէրիքեան՝ Խորհրդական, Պրն. Յակոբ Բէսթէքեան՝ Խորհրդական, Տոքթ. Յակոբ Գարակէօզեան՝ Խորհրդական, Տոքթ. Յարութիւն Արզումանեան՝ Փոխ-ատենադպիր, Տոքթ. Հրայր Տէր Գէորգեան՝ Խորհրդական: Նկարէն կը բացակայի՝ Տոքթ. Պերճ Արթինեան՝ Փոխ-ատենապետ:

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹԻՒՆ

Հրակէր եւ ժողովի օրակարգ	էջ 3
Սահմանադրական կանոններ	էջ 4
Հովիւի տեղեկատուութիւն	էջ 5-6
Ծխական խորհուրդոյ տեղեկատուութիւն	էջ 7-9
Նկեղեցւոյ Մարմիններու տեղեկատուութիւններ ...	էջ 10-17
Ծխական խորհուրդոյ Գաշուեատուութիւն	էջ 18-21
Մարմիններու Գաշուեատուութիւն	էջ 22-25
Հաշուեյարդար	էջ 26
Թեկնածուներու ցանկ	էջ 27
Թեկնածուներու կենսագրական նօթեր	էջ 28

Հ Ր Ա Ռ Է Ր

ՏԱՐԵԿԱՆ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻ

Մոնթրէալի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայաստանեայց Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւն ու ծխական Խորհուրդը այսու կուգան Ձեզ հրա-
ւիրել՝ Տարեկան Անդամական Ընդհանուր Ժողովի, որ պիտի գու-
մարուի

Կիրակի, 10 Փետրոհար 1980, ԺԱՄԸ 15.00-ին

Եկեղեցւոյս մէջ

Իւրաքանչիւր տրատու անդամի պարտականութիւնն է ներկայ
գտնուիլ սոյն կարեւոր Անդամական Ժողովին, որուն օրակարգի
նիւթերն են հետեւեալները.

ՕՐԱԿԱՐԳ.-

- 1) Աղօթք եւ բացում
- 2) Ընտրութիւն օրուան դիւանի
- 3) Ընթերցում նախորդ Ընդհ. Ժողովի ատենազրուեան
եւ վաւերացում
- 4) Անդրադարձում նիւթա-բարոյական տեղեկ. եւ վա-
ւերացում
- 5) 1980 տարուան նախահաշիւի վաւերացում
- 6) Անդամատուրքերու յաւելում՝ 25-էն 30-ի եւ
15-էն 20-ի
- 7) Վաւերացում Ընտրողական Յանձ.ի կողմէ պատրաս-
տուած թեկնածուներու անուններուն
- 8) Ընտրութիւն ծխական Խորհուրդոյ 4 անդամներու
- 9) Ընտրութիւն Հաշուեքննիչ Մարմնի 3 անդամներու
- 10) Ընտրութիւն Ընտրողական Յանձ.ի 5 անդամներու
- 11) Թելադրութիւններ եւ գանազանք
- 12) Փակման Խօսք եւ օրհնութիւն

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՏԵՂԻ ՊԻՏԻ ՌԻՆԵՍԱՆ

Կիրակի, 17 Փետրոհար 1980

ԺԱՄԸ 13.00 - 18.00-ի Միջեի

ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՍՐԱՀԻՆ ՄԷՋ

3.9. Կր խնդրուի իւրաքանչիւր անդամէն ուսումնասիրել իրենց ղրկուած
տեղեկատուութիւնը, որպէսզի ժամանակ չկորսուի Ժողովի ընթացքին,
անգամ մը եւս կարդալով:
Պիտի խնդրէինք մեր անդամներէն, որ բարեհաճին իրենք անձամբ
ներկայ ըլլալ եւ հետերնին ոչ-անդամներ չըբերել:

ԿԱՆՈՆՆԵՐԻ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆՊԱՄԱԿՑՈՒԹԵԱՆՑ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

- 30700ԱԾ 5- ծխական ժողովը կը կազմուի բոլոր այն անձերէն՝ որոնք մկրտուած եւ դրոշմուած են Հայաստանեայց եկեղեցւոյ մէջ, կ'ընդունին անոր վարդապետութիւնը, կանոններն ու ձէսերը եւ կը կատարեն եկեղեցւոյ ու համայնքին վերաբերմամբ իրենց պարտականութիւնները: Այսպիսի անձինք կ'ըլլան ծխական եկեղեցւոյ եւ անոր ծխական ժողովին իրաւասու անդամները:
- » 6- ծուխի մը իւրաքանչիւր անդամ՝ 18 տարիքը լրացուցած, պարտաւոր է իր պատկանած եկեղեցւոյն վճարել տարեկան տուրք մը, որուն քանակը կ'որոշուի Թեմական Պատգամաւորական ժողովին կողմէ, եւ որ կրնայ ծխական ժողովի կողմէ յաւելում կրել, սակայն չի կրնար նուազեցուիլ:
- » 7- ծխական եկեղեցւոյ մը 18 տարիքը լրացուցած իրաւասու անդամները իրաւունք ունին նոյն ծուխի ծխական ժողովներուն մասնակցելու եւ քուէ տալու, պայմանաւ, որ առ նուազն վեց ամիս անցած ըլլայ իրենց անդամակցութենէն ասդին եւ իրենց անդամատուրքերը վճարուած ըլլան: Կըրնան ընտրուիլ, իրենց անդամագրութենէն մէկ տարի ետք, եթէ 21 տարեկան եղած են:
- » 8- Այն անդամները՝ որոնք զանցառու գտնուած են վճարելու մէկ կամ աւելի տարուան անդամատուրքերը՝ նովին իսկ գործով կը կորսնցնեն ծխական ժողովներու մէջ քուէարկելու եւ ծուխէն ներս պաշտօնի ընտրուելու իրենց իրաւունքները: Նման անդամներ կրնան վերստանալ այս իրաւունքները, վճարելով իրենց գէթ վերջին երկու տարուան յետնեալ անդամատուրքերը:

ԿԱՆՈՆՆԵՐԻ ԾԽԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

- 30700ԱԾ16- ծխական ժողովի հրաւերը պէտք է ղրկուի գրաւոր իւրաքանչիւր անդամի անհատապէս, ժողովի թուականէն առնրւազն մէկ շաբաթ առաջ եւ պէտք է պարունակէ ժողովին օրակարգը: Ժողովին օրակարգը կը պատրաստուի Հովիւի եւ ծխական Խորհուրդի կողմէ: Օրակարգին վրայ կ'աւելցուին նոր հարցեր, ծխական ժողովի մեծամասնութեան քուէով:
- » 17- Ծխական ժողովը օրինաւոր կը համարուի, քուէարկու անդամներու առնուազն մէկ-երրորդի կամ յիսուն անդամներու ներկայութեամբ, եւ որոշումներ կ'առնուին ներկայ եւ քուէարկու անդամներու մեծամասնութեամբ:
- » 22- Իւրաքանչիւր անդամ ունի միայն մէկ քուէի իրաւունք՝ որ փոխանցելի չէ, եւ անձամբ պէտք է տրուի: Քուէից հաւասարութեան պարագային, նախագահը կուտայ վճարական քուէն կամ կը թոյլատրէ երկրորդ քուէարկութիւն մը՝ նոյն հարցին մասին:

Սիրելի Անդամներ,

Աստուծոյ շնորհքով եւ ողորմութեամբ տարի մը եւս բոլորեցինք այս գաղութէն ներս, որպէս անդամներ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Մոնթրէալի, միշտ անսասան պահելով մեր հաւատքն ու նուիրումի ոգին հանդէպ մեր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, Անոր Գահակալին Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց, ինչպէս նաեւ մեր թեմի բարեխնամ Առաջնորդին՝ Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեանին, հետեւելով եւ գործադրելով Սրբազնութեան տուած բոլոր հրահանգները մեր եկեղեցւոյ կանոնական, արարողական եւ վարչական բոլոր մարզերէն ներս: Կը մաղթենք եւ կ'աղօթենք, որ Աստուած իր ամենագոր Աջը մեր եկեղեցիին եւ անոր հաւատաւոր եւ բարեպաշտ անդամներուն վրայէն չհեռացնէ, պահելով իր Աստուածային հովանին մեր համայն հաւատացեալ ժողովուրդին, ըլլայ ի ըսփիւս աշխարհի եւ թէ հայրենիքին մէջ:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ.— Այս տարի Արժ. Տ. Սահակ Ա. Բնյ. Պալեան մասնակցեցաւ մեր բոլոր արարողութիւններուն, օգնելով մեզ մեր եկեղեցական գործառնութեանց անխափան կատարման: Սրբազան Պատարագը կատարուեցաւ ամէն Կիրակի եւ տօնական եւ կրօնական տօներուն առթիւ: Մեր եկեղեցւոյ Սարկաւազաց դասը եւ Դպրաց Դասը իրենց զոհողութիւններուն ներած չափով մասնակցեցան մեր սրբազան արարողութեանց, պայծառ պահելով հայուն շարականը եկեղեցւոյ սուրբ յարկէն ներս:

ԽՈՐՀՐԴԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԾԵՍԵՐ.— 1979 տարեշրջանին, կատարուեցան հետեւեալ խորհրդակատարութիւններն ու ծեսերը.

- Մկրտութիւն եւ դրոշմ՝ 44
- Ս. Պսակի արարողութիւն՝ 33
- Թաղման կարգ՝ 31 հատ:

ՀՈՎՈՒԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ.— Մեր կարելիութեան սահմաններուն ներքեւ եւ մեզի եղած տեղեկութեանց համաձայն, հիւանդանոցներու, ծերանոցներու եւ բնակարաններու մէջ այցելեցինք հիւանդներու, տկարներու եւ տարեցներու ջանալով մխիթարել իւրաքանչիւրը:

Այս առթիւ, դարձեալ կը յիշեցնենք մեր համայնքի անդամներուն, որ եթէ կը փափաքին մեր այցելութիւնը որեւէ ծելով, բարեհաճին տեղեկ պահել մեզ, դիմելով եկեղեցւոյս գրասենեակը:

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ.— Այս տարուան ընթացքին, հաճոյքն ու պատիւը ունեցանք մեր համայնքէն ներս պաշտօնական այցը մեր թեմի Բարեխնամ Առաջնորդին՝ Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի, Շրջանային ժողովի առիթով; որուն մասնակցեցան Օթաուայի եւ մեր եկեղեցւոյ ծխական խորհուրդներու բոլոր անդամները, պատգամաւորները, մեր եկեղեցւոյ բոլոր մարմիններու եւ յանձնախումբներու վարչական կազմերու դիւանի անդամները: Նոյն առթիւ դարձեալ հաճոյքն ու պատիւը ունեցանք մեր մէջ ունենալու Գանատայի Առաջնորդի Փոխանորդ՝ Հոգշ. Տ. Վազգէն Ծ. Վրդ. Բէշիշեանը: Այլեւայլ պատճառներով, մեր համայնքէն ներս, դարձեալ

ընդունեցինք այցը բեր հոգեւոր եղբայրներուն, յանձինս՝ Հոգշ. Տ. Յուսիկ Ծ. Կրդ. Պաղտասեանի, Առաջնորդի Փոխանորդ Ամերիկայի Արեւելեան Թեմին եւ հոգեւոր հովիւ Լենքսինկթրնի -նիւ ծրրգի-, Հոգշ. Տ. Արշէն Կրդ. Այվազեանի, Ֆիլատելֆիոյ Ս. Երրորդութիւն եկեղեցիէն, Հոգշ. Տ. Ադան Ծ. Կրդ. Պալիոզեանի, Առաջնորդի Փոխանորդ Աւստրալիոյ Թեմին, Արժ. Տ. Մամիկոն Բհնյ. Ոսկանեանի, հոգեւոր հովիւ Վուտսայտի -նիւ Եորթ-:

ԱՐՏԱՔԻՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ.- Զանացինք միշտ կապ պահել, մեր զբասնեակին միջոցաւ, կառավարական շրջանակներու հետ, ի մասնաւորի ներգաղթի նախարարութեան հետ, ինչպէս նաեւ Օթաուայի Դաշնակցային կառավարութեան ներգաղթի նախարարութեան հետ, ապահովելու համար Գանատա մուտքի դիւրութիւններ մեր ժողովուրդին, որոնք առաւելապէս կը բնակին Թուրքիոյ, Լիբանանի եւ Իրանի մէջ:

ՆԵՐՔԻՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ.- Զանացինք միշտ կապ պահել մեր Եկեղեցւոյ մարմիններուն հետ, մօտէն հետաքրքրուելով անոնց գործունէութեանց, աջակից ըլլալով անոնց բոլոր ձեռնարկներուն ըլլալ եկեղեցական եւ ըլլալ ընկերային մարզերէն ներս:

ՇՆՈՐՀԱՎԱԼԻՔ.- Մասնաւոր շնորհակալութեան խօսք ունինք բոլոր անոնց, որոնք անվերապահ ոգիով օգնեցին մեր Եկեղեցիին, ըլլան անոնք մեր ծխական Խորհուրդի անդամներ եւ կամ մեր մարմիններուն եւ յանձնախումբերուն մէջ աշխատողներ, իրենց խորհուրդներով եւ իրենց աշխատանքի մասնակցութեամբ:

ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ.- Նկատի ունենալով անցեալ տարուան ընթացքին մեր անդամներուն արագօրէն աճող թիւը եւ ծագած անհասկացողութիւնները, յետ այսու կը թելադրենք մեր ժողովուրդին, որ որեւէ պարագային, եկեղեցւոյս անդամակցութեան համար, հաճին դիմել անձամբ եկեղեցւոյ զբասնեակը, առիթ ընծայելով Հոգեւոր Հովիւին մօտէն ծանօթանալու անհատներուն եւ դրութիւնը ընծայել հարցովործերու եկեղեցւոյ ծիսական եւ կանոնական կարգ մը պարագաներու շուրջ:

ԵԶՐԱՎԱՅՈՒԹԻՒՆ.- Կը հայցենք Տիրոջմէ որ Եկեղեցւոյս իւրաքանչիւր անդամին պարզեւէ արեւշատութիւն եւ բարգաւաճութիւն ի փառս Աստուծոյ եկեղեցիին եւ Հայ ազգին: Կ'աղօթենք որ Տէրը իր երկնաւոր շնորհքը առաւել եւս բաշխէ մեր ժողովուրդին, գիտակցութեան եւ նուիրումի ճամբայէն ներս, մասնաւոր Եկեղեցւոյս նկատմամբ, զօրավիզ կանգնելով անոր յառաջդիմութեան եւ պայծառութեան:

Մնամք սիրով պղծաբար
ՊԱՐԷՏ ԿՐԴ. ԵՐԷՅԵԱՆ

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ
ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՈՅ
1 9 7 9 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

1979-ի Ընդհանուր ժողովէն ընտրուած հինգ անդամներու մասնակցութեամբ, ծխական խորհուրդը իր անդրանիկ նիստը գումարեց 28 Մարտ 1979-ին, նախագահութեամբ հոգեւոր հովիւ՝ Հոգ2. Տ.Պարէտ Վրդ. Երէցեանի, եւ ընտրեց իր դիւանը ըստ հետեւեալին.

- | | |
|-----------------------------|-----------------|
| ՊՐՆ. ԱՐԹՕ ՊԱՍՄԱՃԵԱՆ | ՝ Ատենապետ |
| ՏՈՔԹ. ՊԵՐՃ ԱՐԹԻՆԵԱՆ | ՝ Փոխ-Ատենապետ |
| ՊՐՆ. ՎԱՀԷ ԲԷՐԷՍԹԵՃԵԱՆ | ՝ Ատենադպիր |
| ՏՈՔԹ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ | ՝ Փոխ-ատենադպիր |
| ՊՐՆ. ՄԻՍԱԲ ԿՈՒՏՍՈՒՋԵԱՆ | ՝ Գանձապահ |
| ՊՐՆ. ԱՐԱ ԿԷՐԻՔԵԱՆ | ՝ Փոխ-գանձապահ |
| ՊՐՆ. ՅԱԿՈՒՔ ԲԷՍԹԷՔԵԱՆ | ՝ Խորհրդական |
| ՏՈՔԹ. ՀՐԱՅՐ ՏԷՐ ԳԷՈՐԳԵԱՆ | ՝ Խորհրդական |
| ՏՈՔԹ. ՅԱԿՈՒՔ ԳԱՐԱԿԷՕՋԵԱՆ | ՝ Խորհրդական |

28 Մարտ 1979-էն մինչեւ 20 Յունուար 1980, ծխական խորհուրդը Հոգեւոր Հովիւին նախագահութեամբ, գումարեց 30 հերթական նիստեր:

ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎ.- Ծխական խորհուրդս, 16 Յունուար 1980-ին Ամերիկայի Արեւելեան Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի բարձր նախագահութեամբ գումարեց Շրջանային ժողով մը, որուն ներկայ էր նաեւ Գանատայի Առաջնորդի Փոխանորդ Հոգ2. Տ. Վազգէն Ժ. Վրդ. Բէշիշեան: Շրջանային այս ժողովին, ծխ. խորհուրդէս գատ, մասնակցեցան Եկեղեցւոյս Թեմական պատգամաւորները, Եկեղեցւոյս մարմիններու ներկայացուցիչները եւ Օթաուայի ծխական խորհուրդը: Առաջնորդ Սրբազան Հայրը, Առաջնորդութեան գանազան գործունէութիւններուն անդրադառնալէ յետոյ, լսեց Եկեղեցւոյս մարմիններու ներկայացուցիչներուն տուած տեղեկութիւնները ու ըրաւ իր թելադրութիւնները:

ՅԱՐԱՔԵՐԱԿԱՆՔ.- Ծխական խորհուրդս իրեն ենթակայ գանազան մարմիններուն հետ սերտ յարաբերութիւններ մշակելու, իրենց գործունէութիւններէն, պահանջներէն եւ կարիքներէն ժամանակին ու անհրաժեշտ պարագային տեղեակ ըլլալու եւ իւրաքանչիւրին հետ աւելի մօտէն հետաքրքրուելու նպատակաւ, իր անդամներուն մէջէն նշանակեց ներկայացուցիչներ, ամէն մէկ մարմնի համար, որոնք իրենց տեղեկութիւնները տալով ծխական խորհուրդին, կարելի դարձուցին տեւական կապի հաստատումը խորհուրդոյս եւ յանձնախումբերու միջեւ:

Եկեղեցւոյս Երիտասարդաց Մարմինը՝ Հ.Ե.Ե.Կ.Ա., որ 1978-ի ընթացքին վերակազմուած էր Տ. Պարէտ Վրդ. Երէցեանի ջանքերով, իր վարչական անդամներու գանազան զբաղումներուն պատճառաւ, ունեցաւ սահմանափակ գործունէութիւն 1979-ի շրջանին: Ծխ. խորհուրդս իր անդամներէն նշանակած երեք անձերէ բաղկացած Յանձ.ի մը պաշտօն յանձնեց սոյն հարցով հետաքրքրուելու: Յոյսով ենք որ մօտիկ ապագային դրական արդիւնքներ ձեռք կը բերուին:

Ծխական խորհուրդս, այս տարի եւս, փոխադարձ գործունէութեան ոգին մշակեց համայնքիս գանազան կազմակերպութիւններուն հետ, ինչպէս Հ.Բ.Ը.Մ., Պոլսահայ Միութիւն, Թէքէեան Մշակ. Միութիւն, Արմէն-Քէպէք Ալեք Մանուկեան Կարժարան, Քէպէքի Հայ Բրժշկական Ընկերակցութիւն եւ Ռ.Ա.Կ.:

Շէնքի ՄՏԱԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ.- Ժխական Խորհուրդս մասնաւոր կարեւորութեամբ զբաղեցաւ Եկեղեցւոյս կալուածին անհրաժեշտ ու անյետաձգելի նորոգութիւններով: Այս նպատակաւ նշանակուեցաւ մատակարար մարմին մը, որուն մաս կազմեցին՝ Պ.Պ. Արա Կէրիքեան, Ռուբէն Արսէվէր եւ Կայծակ Օղիկեան:

Ա-ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆՆԵՐ.- Եկեղեցւոյ շերտութեան դրութիւնը ծայրէ ի ծայր բծախնդրութեամբ նկատի առնուելով, հարկ եղած նորոգութիւնները կատարուեցան անյապաղ: Ելեկտրական դրութեան անհրաժեշտ փոփոխութիւնները կատարուելով, հինգած գիծերը նորոգութեան ենթարկուեցան: Լուսցարաններու հին կազմածները փոխելով անմիջական նորոգութիւնները ի կատար հանուեցան:

Բ-ՎԱՐՉԲ.- Եկեղեցւոյ սրահները, այս տարի եւս, շարունակուեցան գործածուելի թէ ազգային եւ թէ օտար կազմակերպութիւններու կամ անհատական ձեռնարկութիւններու կողմէ, ըստ որոշուած սակացոյցի մը:

ԴԻՒԱՆԱԳԵՏ ԵՒ ԳՐԱՍԵՆԱԿԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹԻՒՆ.- Ինչպէս նախնցեալ տարիներուն, այս շրջանին եւս, դիւանապետութեան պաշտօնը ամենայն բծախնդրութեամբ եւ կանոնաւորութեամբ տարաւ Պրն. Վահէ Բէթլի, որուն անխոնջ ջանքերուն շնորհիւ Եկեղեցւոյս գրասենեակը միշտ բաց մնաց, իւրաքանչիւր դիմողի խընդրանքին գոհացում տալով:

ԺԱՄԿՈՉ ԵՒ ՀՈԳԱՏԱՐ.- 1979-ի ընթացքին, Եկեղեցւոյս ժամկոչ եւ հոգատարութեան պաշտօնը կատարեց Պրն. Պօղոս Տէմիրճեան, որ իր տիկնոջ հետ միասին վարեց շէնքի հսկողութեան եւ մաքրութեան աշխատանքները:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ.- Յուլուարի 15 եւ 16 օրերուն, Մոնթրէալ ժամանեցին Ամերիկայի Արեւելեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ.Թորգոմ Արք. Մանուկեան եւ Գանատայի Առաջնորդի Փոխանորդ Հոգշ. Տ. Վազգէն Ծ. Վրդ. Բէշիշեան, գումարելու Երջանային ծողով մը Մոնթրէալի եւ ժխական Խորհուրդներուն եւ Եկեղեցւոյս Մարմիններու ներկայացուցիչներուն հետ: Աշխարհական հանրածանօթ ազգայիններու շարքին, այս տարի Եկեղեցւոյս մէջ ընդունեցինք Հ. Բ. Ը. Միութեան ցկեանս նախագահ Տիար Ալեք Մանուկեանը:

ՉԵՌՆԱՐԿՆԵՐ.-

Ա.-ՏէՊԻՒԹԱՆԹՆԵՐՈՒ ՊԱՐԱՀԱՆԴԵՍ.- Եկեղեցւոյս գլխաւոր ձեռնարկը՝ Տէպիւթանթներու պարահանդէսը, այս տարի եւս, տեղի ունեցաւ Յ նոյեմբեր 1979 թուականին Եաթօ Եամփլէյնի շքեղ սրահին մէջ: Կազմակերպիչ Յանձնախումբը, առենապետութեամբ եւ ձեռներէց աշխատութեամբ՝ Տոքթ. Յովհաննէս Պալապանեանի, որեւէ ջանք չի խնայեց իր աշխատանքին մէջ, այս ձեռնարկին յաջողութեամբ պսակուելուն համար: Ժխական Խորհուրդս հրապարակաւ իր ջերմագին շնորհակալութիւնները եւ գնահատանքը կը յայտնէ Տոքթ. Յ. Պալապանեանի եւ Կազմակերպիչ Յանձնախումբի անդամներուն, իրենց տարած աշխատանքին համար:

Բ.- ԵՂՆՈՒՆԻ ՅՈՒՇԱՏՕՆ.- Ապրիլ 24-ի Մեծ Եղեռնի Յուշատօնը այս տարի եւս նշուեցաւ ժողովրդային եւ եկեղեցական յայտագրերով: Հանդիսաւոր Ս. Պատարագ եւ հոգեհանգստեանց կողքին, Ապրիլ 24ի վերամուտին կատարուած մոմավառ թափօրը եւ հոգեւոր յայտագիրը

որուն մասնակցեցան ներկայ խոլոներամ ժողովուրդը: Ժողովրդական յայտագիրներուն իրենց մասնակցութիւնը բերին թէքէեան Մշակ. Յանձնախումբը, Հ.Բ.Ը.Մ., Արմէն-Քէպէք Ալեք Մանուկեան վարժարանը եւ Բ.Ա.Կ.-ը:

Գ.- ԶԱՏԿՈՒԱՆ ՀԱՌԿԻԹՅԵՐ.- Աւանդական Զատկուան գունաւոր հաւկիթներու եւ շօքօլաներու յատուկ կողովիկներու պատրաստութիւնը եւ վաճառումը այս տարի եւս կատարուեցաւ ծխական Խորհուրդի նախաձեռնութեամբ եւ Եկեղեցասէր Տիկնանց Միութեան օժանդակութեամբ: Այս ձեռնարկի իրականացման համար ժրջանօրէն աշխատող Տիկնանցի անդամուհիներուն եւ իրենց անձնուէր մասնակցութիւնը բերող ազգայիններուն ծխ. Խորհուրդս իր շնորհակալութիւնները կը յայտնէ:

Դ.- ՕՐԱՑՈՅՑ.- Ծխական Խորհուրդս այս տարի, որոշեց Առաջնորդարանիս կողմէ պատրաստուած գեղեցիկ պատի օրացոյցները վաճառել: Առաջնորդարանի կողմէ այս օրացոյցները Յունուար ամսուան ընթացքին դրկուելուն պատճառաւ, կարելի չեղաւ գանոնք ցրուել տօնական օրերուն:

Ե.- ԼԻԲԱՆԱՆԻ ԱՂԻՏԵԱԼՆԵՐՈՒՆ Ի ՆՊԱՍՏ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ.- Ծխ. Խորհուրդս Հ.Բ.Ը.Մ.-ի հետ միասնաբար, կազմակերպեց Լիբանանի աղիտեալներուն ի նպաստ հանգանակութիւն մը, որ կարողացաւ կոկիկ գումար մը հայթայթել այս նպատակաւ:

Զ.- ՊԱՏԳԱՄԱՌՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ.- Եկեղեցւոյս չորս պատգամաւորները եւ ծխական Խորհուրդիս Ատենապետ, Հոգեւոր Հովիւին գլխաւորութեամբ մասնակցեցան Զելմսֆօրտ, Մէսէչուսէթի մէջ 3-5 Մայիս 1979 թուականներուն տեղի ունեցող Թեմիս Տարեկան Պատգամաւորական ժողովին, բերելով իրենց դրական բաժինը ժողովի գործունէութեանց:

Ծխական Խորհուրդս, վերջացնելէ առաջ, իր խորին շնորհակալութիւնները կը յայտնէ իր նախագահին Հոգշ. Տ. Պարէտ Վրդ. Երէցեանի որ միշտ խանդավառ նուիրումով, սերտ գործակցութիւն մշակեց Խորհուրդիս հետ:

Շնորհակալութիւն նաեւ բոլոր այն կազմակերպութիւններուն եւ ազգայիններուն, որոնք իրենց անձնուէր գործակցութեամբ թիկունք կանգնեցան ու օգտակար եղան մեր ազգային եւ եկեղեցական աշխատանքներուն մէջ:

Մասնաւոր շնորհակալութեան խօսք մեր շրջանաւարտ անդամներուն, որոնք անձնուիրաբար իրենց կարելին ի գործ դրին ու իրենց բաբինը բերին Եկեղեցւոյս հարցերուն մատակարարման մէջ: Յատկապէս մեր գնահատանքն ու շնորհակալութեան խօսքը կ'ուղղենք Տրթ. Հրայր Տէր Գէորգեանին, որ երեք շրջան-վեց տարի- շարունակաբար բերաւ իր օգտաշատ մասնակցութիւնը Խորհուրդիս գործունէութեան:

ԱՐԹՕ ՊԱՄՄԱՃԵԱՆ
Ատենապետ

ՎԱՀԷ ԲԷՐԷՍԹԷՃԵԱՆ
Ատենաղախ

ՏԱՐԵԿԱՆ ԵՆԴԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ
 « ԲՈՒՐԱՍՏԱՆ » ԱՄՍԱԹԵՐԹԻ ՅԱՆՉՆԱՍՈՒՄԲԻ
 1 9 7 9 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

Եկեղեցւոյս պաշտօնաթերթ «Բուրաստան»-ը բոլորեց իր գոյութեան 15-րդ տարին:

Հոգեւոր հովիւ՝ Հոգշ. Տ. Պարէտ Վրդ. Երէցեան «Բուրաստան»-ը դարձուց իր շարունակական եւ անմիջական հոգածութեան առարկան: Խորին շնորհակալութեան եւ գնահատանքի խօսք ունինք մեր բոլոր աշխատակիցներուն եւ յատկապէս «Բուրաստան»-ի Յանձնախումբին մաս կազմողներուն՝ Պ.Պ. Վահէ Բէթլի, Արա Կէրիքեանին, Օննիկ Գալուստեանին: «Բուրաստան»-ի մեքենագրութեան եւ համայնքային լուրերու բաժնին խմբագրութիւնը ամբողջութեամբ այս տարի եւս ստանձնեց Պրն. Վահէ Բէթլի: Ենորհակալութեան խօսք ունինք նաեւ Թէքէեան Մշակ. Միութեան, որ այս տարի եւս սիրայօժար կերպով տրամադրեց իր մեքենագրութեան արդիական սարքաւորումները «Բուրաստան»-ը աւելի ներկայանալի եւ անոր ընթերցումը աւելի հաճելի դարձնելով:

«Բուրաստան»-ի պարունակութիւնը ջանացինք ընել այլազան: Առաջին հերթին, նկատի ունենալով «Բուրաստան»-ը որպէս կապը մեր եկեղեցւոյ եւ իր անդամներուն միջեւ, տեղ տուինք եկեղեցական, համայնքային, եւ թեմական լուրերու. նոյնպէս՝ մշակութային, կրօնա-բարոյական եւ Հայաստանեայց եկեղեցւոյ հաւատքին ու ծիսակատարութեան հետ կապ ունեցող յօդուածներ հրատարակեցինք: Փափաքելի պիտի ըլլար, եթէ աւելի թիւով աշխատակիցներ ունենայինք, աւելի ճոխացնելու համար «Բուրաստան»-ը:

Մեր ամսաթերթին տպաքանակը կը մնայ 1000 օրինակով, որմէ մօտ 700-ը կ'ուղարկուի Մոնթրէալի հասցէներով մեր եկեղեցւոյ անդամներուն եւ բաժանորդներուն, իսկ մնացեալը՝ Սփիւռքի եւ Հայրենիքի բազմաթիւ եկեղեցիներու, մատենադարաններու եւ ազգային հաստատութիւններու:

Մեր եկեղեցւոյ անդամներէն կը գանձուի եօթ տուար բաժանորդագին, որ ծանուցումներէ գոյացած հասոյթին հետ, կը դիմագրաւէ տպագրութեան եւ առաքումի ծախսերուն մեծ մասը:

ՏՈՔԹ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՐՋՈՒՄԱՆԵԱՆ
 Ատեանպետ

ՎԱՀԷ ԲԵԹԼԻ
 Ատենադպիր

ՏԱՐԾԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹՅՈՒՆ
ՇԱՐԱԹՈՐԵԱՅ ՀԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ
1 9 7 9 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

Շաբաթօրեայ Հայ վարժարանի ուսումնական 1979-1980 տարեշրջանը սկսաւ 15 Սեպտեմբեր 1979-ին, առաւօտեան ժամը 10.30-ին, Արմէն Քէպէք ՀԲԸՄ Ալեք Մանուկեան վարժարանին մէջ: Ներկայ էին գաղութիս Հոգեւոր Հովիւը, վարժարանի Խնամակալ Մարմնի անդամները, վարժա-րանի Տեսուչը, Ուսուցչական կազմը, ինչպէս նաեւ ծնողներ: Բացու-մը կատարուեցաւ կրօնական պատշաճ արարողութեամբ:

Ներկայիս, Շաբաթօրեայ վարժարանը կը հաշուէ մօտ 65 աշակերտ, որոնց երթեւեկը կ'ապահովուի Ալեք Մանուկեան Ամենօրեայ վարժարա-նի սեփական փոխադրական միջոցներով: Դպրոցին մէջ կը դասաւանդուի հայերէն լեզու, գրականութիւն, ազգային պատմութիւն, կրօնք, պար եւ երաժշտութիւն: Պէտք է շեշտել, որ եկեղեցւոյ Հովիւը, դպրոցի Տեսուչը եւ Ուսուցչական կազմը ոչինչ կը խնայեն, այլ ամբողջական նուիրումով կը զբաղին հայ պատանիին հոգեւոր ու ազգային դաստիա-րակութեամբ:

Վարժարանի ուսումնական եւ ոչ ուսումնական ծրագիրներով կը զբաղի վարժարանի Խնամակալ Մարմինը: Խնամակալ Մարմինը, հովանա-ւորութեամբ՝ Հոգշ. Տ. Պարէտ Վրդ. Երէցեանի կը բաղկանայ հետեւ-եալ անհատներէ.

- ՏՈՔԹ. ՅԱԿՈՒԲ ԽԱՉԻԿԵԱՆ \ Ատենապետ
- ՏԻԿ . ԷԼՏԱ ԱՔՔԻՊՐԻԹԵԱՆ \ Փոխ-ատենապետ
- ՕՐ . ՅԱՍՄԻԿ ՄԱՆԿԱՍԱՐԵԱՆ \ Ատենադպիր
- ՊՐՆ . ՎԱՀԷ ՔԵՐԷՍԹԷՃԵԱՆ \ Գանձապահ
- ՏԻԿ . ԱՐԱՔՍԻ ԱՋՆԱԻՈՒՐ \ Խորհրդական
- ՏՈՔԹ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԷՍԷԿԻՒԼԵԱՆ \ Խորհրդական
- ՊՐՆ . ՅԱԿՈՒ ԱՆԿԱԼԱԹԵԱՆ \ Խորհրդական

Շաբաթօրեայ վարժարանը 1979-80 դպրոցական տրաեշրջանը սկսաւ Թօթը դասարաններով եւ հետեւեալ ուսուցչական կազմով.

- ՊՐՆ . ՕՆՆԻԿ ԳԱԼՈՒՍՏԵԱՆ \ Ընդհ. տեսուչ
- ՏԻԿ . ԱՆԳԻՆԷ ՇԱՔԱՐԵԱՆ \ Ա. եւ Բ. դասարան
- ՕՐ . ՆԻՆԱ ԾԵՐՈՒՆԵԱՆ \ Գ. դասարան
- ՏԻԿ . ՇՆՈՐՀԻԿ ԳՐԻԳՈՐԵԱՆ \ Ե. դասարան
- ՊՐՆ . ԼՈՐԻՍ ՄԻՆՆԷԹԵԱՆ \ Զ. դասարան
- ՏԻԿ . ԱՆԱՀԻՏ ՉԱՔԸՃԵԱՆ \ Է. դասարան
- ՏԻԿ . ՏԻՐՈՒՀԻ ՏՐԴԱՏԵԱՆ \ Ը. դասարան
- ՊՐՆ . ՎԱՀԱՆ ՇԱՔԱՐԵԱՆ \ Երաժշտութիւն
- ՏԻԿ . ՓԵՐՈՒՋ ԹԵՆԹԻՒՆԵԱՆ \ Երաժշ. օժանդակ
- ՕՐ . ՆՈՐԱ ԵԱԳՈՒՊԵԱՆ \ Պար

24 Փետրուար 1979-ին տեղի ունեցաւ վարժարանի Խնամակալութեան սարքած դիմակաւոր պարանցիկ երեկոյթը, որ արժանազրեց աննախընթաց յաջողութիւն:

24 Նոյեմբեր 1979-ին, Օր. Սիլվա Տէր Ստեփանեան՝ հեղինակ Շա-բաթօրեայ Հայ վարժարաններէն ներս գործածուող հայերէն լեզուի եւ պատմութեան դասագրքերու եւ Առաջնորդարանի կրթական Տեսուչը, այ-ցելեց վարժարան եւ անձամբ ներկայ եղաւ դասաւանդութեանց: Ան յա-ջորդական երկու թելադրական հանդիպումներ ունեցաւ դպրոցի Տեսու-չին եւ Ուսուցչական կազմին հետ:

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ
ԵԿԵՂԵՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԵԱՆ
1 9 7 9 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

Եկեղեցւոյս այս տարեշրջանի Տիկնանց Միութիւնը իր տարեկան ընդհանուր անդամական ժողովը գումարեց Մարտ 16, 1979-ին եւ նորընտիր վարչութիւնը իր դիւանը կազմեց Մարտ 31-ին, հետեւեալ անդամներով:

- Տիկ. ՀԱՅԿՈՒՀԻ ԿՈՒՏՍՈՒՋԵԱՆ \ Ատենապետ
- Տիկ. ՇՈՒՇԱՆ ԲՐՈՒՏԵԱՆ \ Փոխ-ատենապետ
- Տիկ. ԱՍՏՂԻԿ ՍՐՄԱՔԷՇԵԱՆ \ Ատենադպիր
- Տիկ. ՀԱՅԿԱՆՈՅՇ ԿԷՐԻՔԵԱՆ \ Փոխ-ատենադպիր
- ՕՐ . ՄԵՐՍԷՏԷՍ ՍԱՐԱՖԵԱՆ \ Գանձապահ
- ՕՐ . ԱԼԻՍ ՊԵՏՐՈՍԵԱՆ \ Հաշուապահ
- Տիկ. ԼԻՒՍԻ ՓԵԼՔԷՔԵԱՆ \ Խորհրդական
- Տիկ. ԲՈՋ ՏԻԳՐԱՆԵԱՆ \ Խորհրդական
- Տիկ. ԱՆԱՀԻՏ ԷՎՐԷՆՍԷԼ \ Խորհրդական
- Տիկ. ԱՆԱՀԻՏ ԵՂԻԱՅԵԱՆ \ Խորհրդական
- Տիկ. ԲՈՋ ԹԱԹԻԿԵԱՆ \ Խորհրդական

Տիկնանց Միութիւնս իր բոլոր կարելին ըրաւ այս շրջանին եւս օգտակար ըլլալու համար եկեղեցւոյ, հետեւեալ աշխատանքները ցոյց տալով:

- 1.- ՊՏՈՅՏՆԵՐ.- Այս շրջանին պտոյտները սկսան Շուկրո Փարթիւով Ապրիլ 1 թուականին, յետոյ Ապրիլ վերջ կրկին ունեցանք պտոյտ մը դէպի Էսթէրէլ ու շարունակաբար դէպի Քէպէք, Տրամընվիլ եւայլն:
- 2.- ԾԱՇԵՐ.- Ս. Զատկուան մեր ճաշին յաջորդեցին, 24 Ապրիլի նահատակաց եւ Մայրերու Օրուան յիշատակի ճաշկերոյթները: Իսկ անկէ վերջ, ունեցանք Ս. Խաչի եւ Ս. Ծննդեան առիթներով ուրիշ ճաշկերոյթներ եւս:
- 3.- ՀԱՌԱՔՈՅԹՆԵՐ.- Զանազինք միշտ կապը պահել մեր անդամուհիներուն միջեւ, եւ զանազան առիթներով սարքեցինք թէ-յասեղաններ միշտ ստեղծելու համար ջերմ միջնոլորտ:
- 4.- ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ.- Պոլսէն բարերարուհի տիկին մը նը-Լիրած էր ասեղնագործ նկար մը, որուն համար կազմակերպուեցաւ լօթրիի վաճառում մը եւ այս առիթով ապահովուեցաւ մօտ 800 տոլարի շահ մեր զանձին:
- 5.- ԶԱՏԿՈՒԱՆ ՀԱՌԿԻԹՆԵՐՈՒ ԱՐՇԱՒ.- Նախորդ տարիներու նման, այս տարի եւս, պատրաստուեցան գունաւոր հաւկիթներու կողովիկները, աւանդական չէօրէկն ու պազլավան: Ինչպէս անցեալին, այս անգամ եւս, մեծ յաջողութեամբ գլուխ հանուեցաւ այս աշխատանքը, շնորհիւ մեր ժրաշան անդամներուն, մղիչ ուժ ունենալով ծխական Խորհուրդոյ զանձապահ՝ Պրն. Միսաք Կուտսուզեանը. այս ձեռնարկը եւս նիւթական մեծ գումար մը արձանագրեց մեր եկեղեցւոյ:

Այս բոլորին յաջորդեց մեր աւանդական տօնավաճառը Դեկտեմբեր 1-2 շաբաթավերջին: Ուտեստեղէններու պատրաստութիւնը յաղթանակի բաժինն էր մեր այս գլխաւոր ձեռնարկին: Չեռային աշխատանքներու եւ ասեղնագործութիւններու մոխ տեսակներ պատրաստուեցան մեր ազնիւ անդամուհիներուն եւ այլ անձերու կողմէ, շնորհիւ Վարչութեան տքնաջան աշխատանքներուն եւ զոհողութիւններուն:

Կոմիտաս Դպրաց Դասու ներկայ վարչութիւնը որ ընտրուեցաւ Մարտի սկիզբը կայացած ընդհանուր ժողովին, իր անդրանիկ նիստը գումարելով 20 Մարտ 1979-ին, իր դիւանը կազմեց նախագահու-թեամբ հոգեւոր հովիւ Հոգ2. Տ. Պարէտ Վրդ. Երէցեանի, ըստ հե-տեւեալին.

- | | |
|---------------------------|-----------------|
| ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍՐԿ. ՍՐՄԱՔԷՇԵԱՆ | ՝ Ատենապետ |
| ՊՐՆ. ՄՈՒՐԱՏ ՈՍԿԱՆԵԱՆ | ՝ Փոխ-ատենապետ |
| ՕՆՆԻԿ ՍՐԿ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ | ՝ Ատենադպիր |
| ՊՐՆ. ՍՈՒՔԻԱՍ ԳՈՒՄՐՈՒԵԱՆ | ՝ Փոխ-ատենադպիր |
| ՊՐՆ. ԱՆԴՐԱՆԻԿ ՇԻՐԻՆԵԱՆ | ՝ Գանձապահ |
| ՊՐՆ. ՅԱԿՈՔ ՑՆԾԱԼԵԱՆ | ՝ Խորհրդական |
| ՊՐՆ. ՄԻՍԱՔ ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ | ՝ Հաշուապահ |

ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ.- Վարչութիւնս ցարդ գումարած է 16 վարչական ժողովներ: ներկայիս ունինք դպրաց դաս մը ղեկավարութեամբ Պրն Արթօ Միւհէնտիսեանի եւ փոխ դպրապետ՝ Պրն. Վահան Շաքարեանի, որոնց ջանքերով տեղի կ'ունենան երգչախումբի փորձերն ու պա-տարագի հանդիսաւոր բազմաձայն երգեցողութիւնները:

Իսկ ամէն Կիրակի, դպրաց դասը չորս խումբերու հերթական բաժանմունքով եւ իրենց դասավարներով յանձին՝ Պ.Պ. Վահան Շա-քարեանի, Յակոբ Ցնծալեանի, Գէորգ Փելթէկեանի եւ Միսաք Շա-նազարեանի կը կատարեն իրենց վստահուած Կիրակնօրեայ Աստուած-ահաճոյ պարտականութիւնը: Նոյն ատեն Եկեղեցւոյս բարեշնորհ սարկաւազները՝ Յարութիւն Սրմաքէշեան, Օննիկ Գալուստեան, Ար-թօ Քէփէքճի, Յարութիւն Սրմաքէշեան, Դերենիկ Սայեան եւ Մ-րարակիր դպիրներ՝ Համբարձում Աղազարեան եւ Տիգրան Փափաթեա կը ծառայեն ու կը սպասարկեն Յ. Յեղանին:

Այս տարի եւս, Դպրաց Դասը իր Հոգեւոր Հովիւով եւ սարկա-ւազներով մասնակցութիւնը բերած է նաեւ Օթաուայի մեր հայու-թեան հոգեւոր միթարութեան մէջ:

Ինչպէս անցեալ տարի, այս շրջանին եւս, Դպրաց Դասը իր մաս-նակցութիւնը բերած է երկրորդ անգամ ըլլալով Ամերիկայի Հայց. Եկեղեցւոյ Դպրաց Դասերու Տարեկան Համագումարին, որուն ներ-կայ գտնուած է նոյնինքն դպրապետ՝ Պրն. Արթօ Միւհէնտիսեան, որ ատենին տուած է իր տեղեկատուութիւնը:

Դպրաց Դասը իր մասնակցութիւնը բերաւ կազմակերպուած միաց-եալ պաշտամունքին, Զրիստոնեայ այլ եկեղեցիներու կողքին:

Ապրիլեան Եղեռնի Յուշատօնին առթիւ, կազմակերպուած եկեղե-ցական բացառիկ հանդիսութեան իր մասնակցութիւնը բերաւ զաղու-թիս Հոգեւոր Հովիւին եւ խուռներամ հաւատացեալ բազմութեան հեռ

Դպրաց Դասը կազմակերպեց դարձեալ տարեկան իր պարանցիկ ե-րեկոյթը մեծ յաջողութեամբ: Դասըս կը մտադրէ, մօտիկ ժամանա-կաշրջանի մը մէջ, տօնել իր կազմութեան 21-րդ տարեդարձը ըստ սովորութեան եւ յիշել, ինչպէս միշտ, դասէն անդարձ հեռացած սպասարկուները, յատուկ հոգեհանգստեան պաշտօնով:

Դպրաց Դասու Վարչութիւնը իրականացուց կահաւորուած յատուկ հանդերձներու եւ գոյքերու, ինչպէս նաեւ ժողովներու սրահ մը

որ մեծապէս օգտակար պիտի դառնայ :

Այս բոլորին հետ սակայն, Դպրաց Դասու Վարչութիւնը մնայուն օրակարգի առարկայ դարձուցած է եւ անհետաձգելիօրէն կը հետապընդէ երեք կարեւորագոյն հեռանկարներ. -

ա. - Նոր անդամարշաւ

բ. - Թրկսեռ երէց երգչախումբի կազմութիւն

գ. - Շատ բաղձալի պատանեկան կամ դպրոցակն դարձեալ երկսեռ երգեցիկ դպրաց դաս մը :

Այս յոյժ կարեւոր գործերու յաջողութեանց համար, կը խնդրէ եւ կը յուսայ ունենալ գաղութիս անվերապահ քաջալերութիւնն ու անկեղծ աջակցութիւնը անխտիր :

Այս շրջանին մէջ, Դպրաց դասուս եւ վարչութեանս բոլոր գործունէութիւնները կարելի եղաւ իրագործել շնորհիւ մեր անդամներուն ջանքերով եւ մասնաւորաբար մեր բարեպաշտ ժողովուրդին բարոյական ու նիւթական անսակարկ քաջալերանքով :

Պիտի ջանանք հաւատարմօրէն ծառայել եւ պայծառ պահել մեր պաշտելի Հայաստանեայց Ս. Եկեղեցին՝ ի փառս Հայ ժողովուրդին, Հայ մշակոյթին եւ մեր Հայրենեաց եւ անոր շինարար առաքելատիպ Գահակալին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Առաջնոյ Ամենայն Հայոց Կաթողիկոսին :

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍՐԿ. ՍՐՄԱՔԷՇԵԱՆ
Ատենապետ

ՕՆՆԻԿ ՍՐԿ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ
Ատենադպիր

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ
 ՀԱՇՈՒՆՔՆՆԻՉ ՄԱՐՄՆԻ
 1 9 7 9 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ
 Յարգելի Անդամ-Անդամուհիներուն

Քննեցինք Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ ծխական Խորհուրդոյ մուտքի եւ ելքի, ինչպէս նաեւ հաշուեկշիռի ցուցակները 1 Յունուար 1979-էն 31 Դեկտեմբեր 1979 շրջանի համար:

Մեր քննութիւնները եղան ընդհանրապէս ընտրուած հաշուեքննական մակարդակի վրայ եւ պարփակեցին հաշուական տոմարներու եւ փաստաթուղթերու վաւերական ձեւի ճշգրտման, զորս հարկ տեսանք զանազան պայմաններու տակ:

Ըստ մեր կարծիքին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ ծխական Խորհուրդի ցոյց տուած մուտքի եւ ելքի հերթական տեղեկատուութիւնները ճշգրիտ կերպով կը ներկայացնեն իր 1979 տարեշրջանի գործունէութիւնը եւ իր վիճակը 31 Դեկտեմբեր 1979-ի, նախորդ տարիներու որդեգրած հաշուակալական սկզբունքներու հիման վրայ:

Մասնագէտ հաշուակալներ՝

ԱՐԱՊԵԱՆ ՎԱՀԱԳՆ
 ԶԱՏՐՃԵԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
 ՏԵՐՎԻՇԵԱՆ ԱՐՏԷՆ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՈՒԵՏՈՒՈՒԹԻՒՆ
ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՈՅ
1 9 7 9 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

<u>Մ Ո Ւ Տ Ք</u>	<u>31.12.79</u>	<u>31.12.78</u>
Եկեղեցւոյ մոմավառութենէ եւ պնակէ	11,946	10,954
Եկեղեցւոյ կալուածէն վարձք	5,135	5,805
Պրոկուրատան ամսաթերթէ	3,235	4,272
Շաքաթօրեայ վարժարանէ	7,031	10,116
Խորհրդակատարութիւններէ	8,330	8,065
Անդամավճարներէ	18,810	14,463
Պարտքի շիջման նուիրատուութիւններէ ...	878	2,382
նուիրատուութիւններէ	25,830	23,107
Իւղազին նուիրատուութիւններէ	6,025	7,084
Պատի օրացոյցէ	931	421
Դրամատան տոկոսէ	5,015	2,468
Գրասենեակի զանազան մուտքերէ	710	937
Շաքաթօրեայ վարժարանի ձեռնարկէ	3,245	2,760
Ջատկուան հաւկիթներէ	1,989	3,077
Տէպիւթանթ պարահ. նախորդ տարուան	2,624	310
Տէպիւթանթներու պարահանդէսէ	9,531	13,114
Ջովացուցիչ մեքենայէ	205	500
Ջանազան հանդիսութիւններէ	----	353
Տիկնանց Միութենէ	9,000	8,000
Մամիկոնեան Մշակ. Յանձնախումբէ	300	----
Դպրաց Դասէ	1,000	----
Երիտասարդացէ	----	454
	<u>\$121,830</u>	<u>\$118,642</u>
Պոլսոյ Պատրիարքարանի հաշւոյն	1,950	9,525
	<u>\$123,780</u>	<u>\$128,167</u>

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՈՒԵՏՈՒՈՒԹԻՒՆ
 ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՈՅ
 1 9 7 9 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

<u>Ե Լ Ք</u>	<u>31.12.79</u>	<u>31.12.78</u>
Պաշտօնէութեան	27,840	23,223
Եկեղեցիոց ԺԱՄՍԵՐՈՒՆ		
Եկեղեցականաց յատկացումներ	5,638	5,390
Հոգեւորականի ինքնաշարժի	----	6,037
Ջանազանք	3,154	3,259
Կալուածի պահպանութեան	18,943	22,447
Գլխաւոր նորոգութեանց	13,020	13,750
ՎՅԱՆՈՒՄԱՆ ԿԱՄԱՅՈՒՄՆԵՐԻ	3,456	4,833
Շաբաթօրեայ վարժարանի	11,755	12,111
Գրասենեակի ծախսերու	7,434	4,857
Պատի օրացոյցի	1,149	----
Ապրիլեան Յուշահանդէսի	544	----
Ջանազան գործունէութեանց	579	369
Շիջման Յանձ.ի փոխանցում	7,000	5,000
Առաջնորդարանի տուրքի	21,200	9,000
	<u>\$121,712</u>	<u>\$110,276</u>
Պոլսոյ Պատրիարքարանի հաշիւ	11,475	----
	<u>\$133,187</u>	<u>\$110,276</u>
Մուտքի առաւելութիւն ի դէմ ելքի	----	39,220
Ելքի առաւելութիւն ի դէմ մուտքի	(9,407)	----
Պատրաստ գումար Յունուար 1-ին	66,184	26,964
Պատրաստ գումար Դեկտեմբեր 31-ին	56,777	66,184

Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Ի
 ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՈՅ
 19 8 0 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

<u>Մ Ո Ւ Տ Ք</u>	<u>1 9 7 9</u> Կատարուած	<u>1 9 8 0</u> Նախահաշիւ
Եկեղեցւոյ մոմավառութենէ եւ պնակէ	11,946	13,000
Եկեղեցւոյ կալուածէն վարձք	5,135	9,500
Պարտքի շիջման ամսաթերթէ	3,235	4,500
Շաքաթօրեայ վարժարանէ	7,031	7,000
Խորհրդակատարութիւններէ	8,330	8,500
Անդամավճարներէ	18,810	22,000
Պարտքի շիջման նուիրատուութիւններէ	878	----
Նուիրատուութիւններէ	25,830	31,000
Իւղազինի նուիրատուութիւններէ	6,025	7,000
Պատի օրացոյցէ	931	500
Դրամատան տոկոսէ	5,015	12,000
Գրասենեակի զանազան մուտքերէ	710	1,000
Շաքաթօրեայ վարժարանի ձեռնարկէ	3,245	3,500
Ջատկուան հաւկիթներէ	1,989	2,500
Տէպիւթանթներու նախորդ տարուան	2,624	3,500
Տէթիւթանթներու պարահանդէսէ	9,531	10,000
Ջովացուցիչ մեքենայէ	205	300
Եկեղեցասէր Տիկնանց Միութենէ	9,000	10,000
Մամիկոնեան Մշակ. Յանձնախումբէ	300	300
Դպրաց Դասէ	1,000	1,000
Երիտասարդացէ	----	1,000
	<u>\$121,830</u>	<u>\$148,100</u>
Պոլսոյ Պատրիարքարանի հաշւոյն	1,950	----
Պարտքի շիջման Յանձնախումբի փոխանցում Դեկտ. 31-ի պատրաստ գումարին	-----	46,837
	<u>\$123,780</u>	<u>\$194,937</u>

Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Ի
 ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՈՅ
 1 9 8 0 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

<u>Ե Լ Ք</u>	1 9 7 9 Կատարուած	1 9 8 0 Նախահաշիւ
Պաշտօնէութեան	27,840	33,000
Եկեղեցիոց ԾԱԽՍԵՐՈՒՆ՝		
Հոգեւորականաց յատկացումներ	5,638	7,000
Զանազանք	3,154	3,500
Եկեղեցւոյ պարտքի վճարում	----	14,500
Նալուածի պահպանութեան	18,943	21,000
Գլխաւոր նորոգութեանց	13,020	15,000
Պրոկուրատան ամսաթերթի	3,456	5,500
Շաբաթօրեայ վարժարանի	11,755	13,000
Գրասենեակի ծախսերու	7,434	7,500
Օրացոյցի	1,149	----
Ապրիլ 24-ի տօնակատարութեան	544	----
Զանազան գործունէութեանց	579	500
Պարտքի Շիջման Յանձ.ի փոխանցում	7,000	----
Առաջնորդարանի տուրք	21,200	27,000
	<u>\$121,712</u>	<u>\$147,500</u>
Պոլսոյ Պատրիարքարանի հաշիւ	1,475	----
	<u>\$133,187</u>	<u>\$147,500</u>
Մուտքի առաւելութիւն ի դէմ ելքի		47,437
Ելքի առաւելութիւն ի դէմ մուտքի	(9,407)	----
Պատրաստ գումար Յունուար 1-ին	66,184	56,777
Պատրաստ գումար Դեկտեմբեր 31-ին	56,777	104,214

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՈՒԵՏՈՒՈՒԹԻՒՆ
ՊԱՐՏՔԻ ՇԻՋՄԱՆ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲԻ
1 9 7 9 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

<u>Մ Ո Ւ Տ Ք</u>	<u>31.12.79</u>	<u>31.12.78</u>
Նոնայթըտ Չըրչի տարեկան վարձքէ	4,000	4,000
Դրամատան տոկոսէ	4,481	3,576
Ծխական Խորհուրդէ	7,000	5,000
	<u>\$15,481</u>	<u>\$12,576</u>

Ե Լ Ք

Կալուածի պարտքի վճարումներու	12,500	12,500
Կալուածի պարտքի տոկոսի	2,641	3,453
Դրամատան ծախսերու	2	2
	<u>\$15,143</u>	<u>\$15,955</u>
Մոլտքի առաւելութիւն ի դէմ ելքի	338	----
Ելքի առաւելութիւն ի դէմ մոլտքի	----	3,379
Պատրաստ գումար Յունուար 1-ին	46,499	49,878
Պատրաստ գումար Դեկտեմբեր 31-ին	46,837	46,499

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՈՒԵՏՈՒՈՒԹԻՒՆ
ԿՈՄԻՏԱՍ ԴՊՐԱՑ ԴԱՍՈՒ
1 9 7 9 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

<u>Մ Ո Ւ Տ Ք</u>	31.12.79	31.12.78
	-----	-----
Եկեղեցւոյ պնակի հասոյթներէ	1,058	1,355
Նուիրատուութիւններէ	1.129	1.181
Տարեկան պարանցիկ երեկոյթէ	1,915	3,090
Նորածեւութեանց ցուցահանդէսէ	143	----
Դրամատան տոկոսէ	14	10
Ճաշերէ եւ դաշտագնացութենէ	----	1,142
	-----	-----
	\$4,259	6,778

Ե Լ Ք

Պատուասիրութեանց եւ ճաշերու	71	272
Դպրաց Դասի սենեակի շինութեան	2,320	1,125
Շապիկներու շինութեան	----	300
Պատգամաւորներու	117	400
Ծաղկեփունջերու	345	----
Զանազան ծախսերու	430	358
Արմէն-Քէպէքի նուիրատուութիւն	----	500
Ժխական Խորհուրդի փոխանցուած	1,000	----
Երաժշտապետի եւ դպիրներու	450	1,240
	-----	-----
	\$4,733	\$4,195
Մուտքի առաւելութիւն ի դէմ ԵԼՔի	----	2,583
ԵԼՔի առաւելութիւն ի դէմ մուտքի	(474)	----
Պատրաստ գումար Յունուար 1-ին	3,182	599
Պատրաստ գումար Դեկտեմբեր 31-ին	2,708	3,182

ՆԻՒՅՄԱԿԱՆ ՀԱՇՈՒԵՏՈՒՈՒԹԻՒՆ
ԵԿԵՂԵՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԵԱՆ
1 9 7 9 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ

<u>Մ Ո Ւ Տ Ք</u>	<u>31.12.79</u>	<u>31.12.78</u>
Անդամավճարներէ	505	445
Նուիրատուութիւններէ	245	105
Ճաշերէ եւ ուտեստեղէններէ	4,468	3,501
Տարեկան տօնավաճառէ	6,674	5,662
Վիճակահանութենէ	857	1,301
Ջրօսապտոյտներէ	2,477	2,491
Դրամատան տոկոսէ	64	83
Ջանազաններէ	101	30
Տարուան եկամուտ	<u>\$15,391</u>	<u>\$13,618</u>

Ե Լ Ք

Ճաշերու եւ ուտեստեղէններու	1,946	1,679
Տարեկան տօնավաճառի	1,830	1,135
Վիճակահանութեան	40	517
Ջրօսապտոյտներու	1,612	1,603
Խոհանոցի պիտոյքներու	342	1,262
Ջանազանքի	640	352
Երուսաղէմի սանի	50	50
Ժխական Խորհուրդոյ փոխանձուած	9,000	8,000
Տարուան ելք	<u>\$15,460</u>	<u>\$14,598</u>

Ելքի առաւելութիւն ի ղէմ մուտքի	(69)	(980)
Պատրաստ գումար Յունուար 1-ին	1,716	2,696
Պատրաստ գումար Դեկտեմբեր 31-ին	1,647	1,716

ՆԻԻԹԱԿԱՆ ՀԱՇՈՒԵՏՈՒՈՒԹԻՒՆ
ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ
1 9 7 9 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ

<u>Մ Ո Ւ Տ Ք</u>	31.12.79	31.12.78
ՆՈԼԻՐԱՏՈՒՆԵՐԻ ԹԻՒՆՆԵՐԷ	100	35
ԳԻՐՔԵՐՈՒ ՎՃԱՌՔԷ	3,160	2,993
ՊԵՏԱԿԱՆ ՕԺԱՆՂԱԿՈՒԹԻՒՆ՝ հայկական ձայնապնակի պատրաստ. համար .	----	2,250
Ձայնապնակներու վճառքէ	2,388	85
Դրամատան տոկոսէ	9	10
	<u>\$5,657</u>	<u>\$5,373</u>

Ե Լ Ք

ԳԻՐՔԵՐՈՒ ՁԱՄԱՆ	2,898	2,937
Ձայնապնակներու պատրաստութեան	1,893	2,187
Ձայնապնակներու ՁԱՄԱՆ	----	34
Շարժական գրադարանի -գրախանութ-	547	----
Տպագրութիւն, հրատարակում	333	----
Թղթատարութիւն եւ զանազանքի	61	200
Ժխական Խորհուրդի փոխանցուած	300	----
	<u>\$6,032</u>	<u>\$5,358</u>
Առևտրի առաւելութիւն ի դէմ ելքի	----	15
Ելքի առաւելութիւն ի դէմ մուտքի	(375)	----
Պատրաստ գումար ՅՈՒՆՈՒՄ 1-ին	2,396	2,381
Պատրաստ գումար ԴԵԿՏԵՄԲԵՐ 31-ին	2,021	2,396
Ի ձեռին ունեցած գիրքերու եւ ձայնապնակներու	\$2000	
մօտաւոր արժէք		

ՀԱՇՈՒՆՅԱՐԴԱՐ
Յ1 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1 9 7 0

ԸՆԹԱՑԻԿ ԻՆՉՔ

ՊԱՏՐԱՍՏ ԳՈՒՄԱՐ՝

Հիմնադրամի Յանձնախումբի մօտ	46,837	
Եկեղեցւոյ Տիկնանց Միութեան մօտ	1,647	
Կոմիտաս Դպրաց Դասի մօտ	2,708	
Մամիկոնեան Մշակ. Յանձնախումբի մօտ.....	2,021	
Երիտասարդաց Կազմակերպութեան մօտ	753	
Ժխական Խորհուրդի մօտ	56,777	\$110,743
<u>ՀՈՂ ԵՒ ԿԱԼՈՒԱԾ (Գնման գինով 1970)</u>		

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցի	250,000	
Յաւելուած Խորանի եւ զանազանք	22,463	272,463

Եկեղեցւոյ պատկան ինքնաշարժի.....	6,037	
Պարահանդէսի յետամնացած զանձուեւիք	3,500	9,537

ՊԱՐՏՔ ԵՒ ԶՈՒՏ ԱՐԺԷՔ

ԸՆԹԱՑԻԿ ՊԱՐՏՔԵՐ՝

Եկեղեցւոյ կալուածին տարեկան.....	12,500	
Արմէն-Քէպէք վարժարանին	4,700	
Առաջնորդարանի	7,000	

ԵՐԿԱՐ ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՐՏՔ

Եկեղեցւոյ վճարում	18,750	42,950
(% 6,5 տոկոս)		

<u>ԶՈՒՏ ԱՐԺԷՔ</u>		\$349,793
-------------------	--	-----------

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցի		\$349,793
------------------------------------	--	-----------

ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ՅԱՆՉՆԱՍՈՒՄԲ 1979

- ՏՈՔԹ. ԱՐԹՕ ՏԷՄԻՐՃԵԱՆ \ Ատենապետ
- ՊՐՆ . ՎԱՀԷ ԲԷԹԼԻ \ Ատենաղպիր
- ՊՐՆ . ԲԵՐՈՎԲԷ ՊՏՈՒԿԵԱՆ \ Անդամ
- ՏՈՔԹ. ՅՈՎՀԱՆՆԵՍ ՊԱԼԱՊԱՆԵԱՆ \ Անդամ
- ՊՐՆ . ԺԻՐԱՅՐ ԿԱԶԷՐԵԱՆ \ Անդամ

ԹԵԿՆԱԾՈՒԽՆԵՐ 1980 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆՑ

ԺՈՂՈՎԻ ԴԻՒԱՆԻ

ԱՏԵՆԱՊԵՏՈՒԹԵԱՆ
(ընտրելի 1 հոգի միայն)

Ատենաղպրութեան
(ընտրելի 1 հոգի միայն)

- ՏՈՔԹ. ՅԱԿՈԲ ԽԱԶԻԿԵԱՆ
- ՊՐՆ . ՕՆՆԻԿ ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

- ՏԻԿ . ՍՐԲՈՒՀԻ ՏԷՐ ՕՀԱՆՆԵՍԵԱՆ
- ՊՐՆ . ԳԷՈՐԳ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՃԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՈՅ

(ընտրելի 4 հոգի երկու տարուան շրջանի համար)

- ՊՐՆ . ԱՌԱՔԵԼԵԱՆ ԱՌԱՔԵԼ
- ՏՈՔԹ. ԱՐՋՈՒՄԱՆԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ
- ՏԻԿ . ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ ԱՐՏԱ
- ՏՈՔԹ. ԽԱԶԻԿԵԱՆ ՅԱԿՈԲ
- ՊՐՆ . ԿԱԶԷՐԵԱՆ ԺԻՐԱՅՐ
- ՊՐՆ . ՊԱՄՄԱՃԵԱՆ ԱՐԹՕ
- ՏՈՔԹ. ՏԷՄԻՐՃԵԱՆ ԱՐԹՕ
- ՊՐՆ . ՓԵԼԹԷՔԵԱՆ ԳԷՈՐԳ

ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ՅԱՆՉՆԱՍՈՒՄԲԻ

(ընտրելի հինգ հոգի մէկ տարուան շրջանի համար)

- ՊՐՆ . ԱՅՎԱՏԵԱՆ ԺԻՐԱՅՐ
- ՏԻԿ . ԳԱԼԱՅԾԵԱՆ ԱՆԱՀԻՏ
- ՊՐՆ . ԹԱԳԻՈՐԵԱՆ ՄՈՒՐԱՏ
- ՊՐՆ . ԹՈՐԻԿԵԱՆ ՀՐԱԶ
- ՊՐՆ . ԿԷՕԶԷՐԵԱՆ ՀԱՄԲԱՐՉՈՒՄ
- ՏՈՔԹ. ՊԱԼԱՊԱՆԵԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍ
- ՊՐՆ . ՊՏՈՒԿԵԱՆ ԲԵՐՈՎԲԷ
- ՊՐՆ . ՍԱՐԱՖԵԱՆ ՀՐԱՆԴ
- ՏՈՔԹ. ՏԷՐ ԳԷՈՐԳԵԱՆ ՀՐԱՅՐ
- ՊՐՆ . ԲԷԹԼԻ ՎԱՀԷ

ՀԱՇՈՒԵՔՆՆԻՉ ՄԱՐՄՆԻ

(ընտրելի երեք հոգի մէկ տարուան շրջանի համար)

- ՊՐՆ . ԱՐԱՊԵԱՆ ՎԱՀԱԳՆ
- ՊՐՆ . ԲՐՈՒՏԵԱՆ ԻՎԱՆ
- ՊՐՆ . ՄԱՆՈՒԿԵԱՆ ԳԷՈՐԳ
- ՊՐՆ . ՉԱՏՐՃԵԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
- ՊՐՆ . ՏԷՐՎԻՇԵԱՆ ԱՐՏԷՆ
- ՊՐՆ . ԲԷՓԷՔԺԻ ԱՐԹՕ